ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«-----» ---------- 2010 թվականի N ------- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N N 1121, 1122 ԵՎ 1123 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ), ՆՊԱՏԱԿԱՅԻՆ – ԾՐԱԳՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի առաջին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1121, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 և «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային - ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1123 որոշումները:

2. Հաստատել՝

1) «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգ»-ը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգ»-ը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային- ծրագրային ֆինանսավորման կարգ»-ը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) «Գիտական փորձաքննության և գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման կարգ»-ը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) «Գիտական ծրագրերի և թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգ»-ը՝ համաձայն N 5 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
---------- « » -ի N որոշման

ԿԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող պետության կողմից հիմնադրված ոչ առևտրային և ավելի քան 50% պետական բաժնեմասով շահույթ հետապնդող գիտական կազմակերպություններում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետև՝ բուհ) հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական կադրերի պատրաստման ծրագրերի (այսուհետև՝ ծրագիր) հաստատման ու ֆինանսավորման (այսուհետև՝ բազային ֆինանսավորում) կարգը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետև՝ կոմիտե) ծրագրերի նախագծերը և դրանց ֆինանսական նախահաշիվները, որպես բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնավորում և դրա անբաժանելի մաս, սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ հաջորդ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

II. ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՍՏԱՏԵԼԸ

3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան կոմիտեի կողմից սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն են ներկայացնում իրենց կառավարման կամ համակարգման ոլորտում գործող գիտական կազմակերպությունների և բուհերի կողմից մշակված ծրագրերի նախագծեր:

Հիմնարար հետազոտությունների ծրագրերի նախագծերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կարծիքի հետ միասին:

4. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը տրամադրվում են գիտության և տեխնիկայի գերակա ուղղությունների շրջանակներում հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ իրականացնող գիտական կազմակերպություններին և բուհերին:

5. Ծրագրերի նախագծերը պետք է պարունակեն տեղեկություններ առաջարկվող ծրագրերի արդիականության, նպատակների և խնդիրների, կատարման ժամկետների ու ծավալների, ակնկալվող արդյունքների, ավարտական ձևերի (հաշվետվություն, արտոնագրեր, ներդրման հաշվետվություն և այլն) և ֆինանսավորման ծավալների վերաբերյալ:

6. Կոմիտեն՝ գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի (այսուհետև՝ փորձագետների համակարգ) միջոցով, 15 աշխատանքային օրվա ընթացքում գիտական փորձաքննության է ենթարկում հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրերի նախագծերը: Գիտական փորձաքննության դրական եզրակացություն ստացած նախագծերը կոմիտեի կողմից 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են գիտական ծրագրերի և թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողով (այսուհետև՝ հանձնաժողով): Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է նախագծերը և կոմիտե ներկայացնում առաջարկություն՝ յուրաքանչյուր նախագծի իրականացման նպատակահարմարության և ֆինանսական ծավալների վերաբերյալ:

7. Կոմիտեն 10 աշխատանքային օրվա ընթացքում համակարգում է համապատասխան ՀՀ պետական կառավարման մարմիններից և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից ստացված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի նախագծերը և դրանց ցանկը ներկայացնում հանձնաժողով: Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է նախագծերը և կոմիտե ներկայացնում առաջարկություն՝ յուրաքանչյուր նախագծի իրականացման նպատակահարմարության և ֆինանսական ծավալների վերաբերյալ:

8. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների ցանկը կազմվում է կոմիտեի կողմից՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ ու ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

9. Գիտական կադրերի պատրաստման ծրագրերը մշակվում և իրականացվում են համաձայն Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգի:

10. Ամփոփված ծրագրերի նախագծերն ու դրանց ֆինանսական նախահաշիվները, կոմիտեի կողմից բյուջետային գործընթացով սահմանված ժամկետներում, համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ՝ հաջորդ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում ընդգրկելու նպատակով և սահմանված կարգով ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

III. ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՆ ՈՒ ԴՐԱՆՔ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

11. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո, օրենքում ընդգրկված ծրագրերի իրականացման համար, կոմիտեն համապատասխան գիտական կազմակերպությունների և բուհերի հետ կնքում է պայմանագրեր:

12. Պայմանագրում նշվում է համապատասխան ծրագրի անվանումը, իրականացման ժամկետները, ֆինանսավորման չափը, պայմանները և ժամկետները, ինչպես նաև՝ իրականացվող ծրագրի ընթացիկ (տարեկան) և ավարտված ծրագրի ամփոփիչ հաշվետվությունների ձևերը, դրանց ներկայացման ժամկետները, ծրագրի վերջնական կատարողական ակտերի ներկայացման ժամկետները և արդյունքների գնահատման կարգը:

13. Կնքված պայմանագրի ֆինանսավորումն ըստ ամիսների իրականացվում է հետևյալ կարգով՝ գիտական կազմակերպությունը, բուհը, մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը, կոմիտե է ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանում պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ: Հայտում նշվում է պայմանագրի շրջանակներում գիտական կազմակերպության, բուհի կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ: Կոմիտեն ստուգում և ամփոփում է հայտի տվյալները ու իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

14. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորում հատկացվում է

պայմանագրային հիմունքներով՝ որպես օգտագործման հանձնված գույքի պահպանման ծախս:

15. Գիտական կազմակերպությունները և բուհերը պայմանագրում նշված ժամկետներում կոմիտե են ներկայացնում իրականացվող ծրագրերի ընթացիկ (տարեկան) և ավարտված ծրագրերի ամփոփիչ հաշվետվություններ:

16. Կոմիտեն, փորձագետների համակարգի միջոցով, 15 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի իրականացման ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվությունների գիտական փորձաքննություն և 10 աշխատանքային օրվա ընթացքում արդյունքները ներկայացնում հանձնաժողով: Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է հաշվետվությունները և կոմիտե է ներկայացնում առաջարկություն՝ հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի իրականացման ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվությունների վերաբերյալ: Իրականացվող հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի ֆինանսավորումը շարունակվում է ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների գիտական փորձաքննության դրական եզրակացության և հանձնաժողովի առաջարկության հիման վրա: Իրականացվող հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրի ընթացիկ հաշվետվության գիտական փորձաքննության բացասական եզրակացության և հանձնաժողովի առաջարկության հիման վրա հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրի ֆինանսավորումը դադարեցվում է հաշվետու տարվան հաջորդող երրորդ ամսից:

17. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների գիտական փորձաքննության և հանձնաժողովի բացասական եզրակացությունների հիման վրա դադարեցված հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի չֆինանսավորված միջոցները մրցութային կարգով գիտական սարքավորումներ գնելու նպատակով վերաբաշխելու վերաբերյալ:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
---------- « » -ի N որոշման

Կ Ա Ր Գ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների շրջանակներում, նոր գիտական հետազոտությունների կամ գիտատեխնիկական նոր մշակումների հանգեցնող, գիտնականների և հետազոտական խմբերի (կոլեկտիվների) նախաձեռնությամբ ներկայացված ու մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի (այսուհետև՝ գիտական թեմայի հայտ) իրականացման՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար հատկացումները, որպես դրամաշնորհներ, նախատեսվում են միայն մրցութային կարգով ընտրված ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետև՝ կոմիտե) կողմից հաստատված գիտական թեմաների հայտերի ֆինանսական նախահաշիվների հիման վրա, որոնք, որպես կոմիտեի կողմից կազմվող բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնավորում և դրա անբաժանելի մաս, սահմանված կարգով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

II. ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

3. Կոմիտեն գիտական թեմաների հայտերի (այսուհետև՝ հայտ) ընտրության և հաստատման նպատակով հայտարարում է մրցույթ՝ սույն կարգի պահանջներին համապատասխան, ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների, որոնց ցանկը հատատվում է կոմիտեի կողմից:

4. Կոմիտեն մրցույթի մասին հայտարարությունը հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով՝ հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջին օրվանից, առնվազն, 45 օր առաջ: Մրցույթի հայտարարությունը պարունակում է համառոտ

տեղեկություններ մրցույթի անցկացման նպատակի, մրցույթի հրավեր ստանալու և մրցույթին մասնակցելու պայմանների մասին:

5. Կոմիտեն մրցույթի հրավերը հայտարարության հրապարակման օրը տեղադրում է կոմիտեի էլեկտրոնային կայքում: Անհրաժեշտության դեպքում մրցույթի հրավերը տրամադրվում է նաև էլեկտրոնային կրիչ ներկայացնող անձանց:

6. Հայտը ներկայացվում է մրցույթի հրավերով սահմանված կարգով:

7. Մրցույթի հրավերը պետք է պարունակի.

1) հայտի ձևը և դրա լրացման ցուցումները,

2) հայտի ղեկավարին և հետազոտական խմբի (կոլեկտիվի) անդամներին ներկայացվող որակավորման պահանջները, ինչպես նաև տեղեկություններ՝

ա. հայտով ներկայացված գիտական թեմայի նպատակի հիմնավորման, խնդիրների, դրանց լուծման նախադրյալների և ուղիների, թեմայի կատարման ժամկետների, դրա կատարման նպատակով առկա և ձեռք բերվող սարքավորումների, նյութերի, միջոցների, նախատեսվող արշավախմբերի, գիտագործնական միջոցառումների անհրաժեշտության ու դրանց համար անհրաժեշտ գումարների մասին,

բ. գիտական թեման իրականացնելու համար գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետև՝ բուհ) կարողությունների վերաբերյալ, ներառյալ համապատասխան լաբորատորիայի, սարքերի, սարքավորումների, միջոցների, նյութերի և այլնի մասին,

3) հայտի ֆինանսական նախահաշվի ձևը,

4) հայտը ներկայացնելու ժամկետը, տեղը, ձևը,

5) հայտի գրանցման պայմանները,

6) հայտերի բացման օրը, գնահատման կարգը,

7) մրցույթի արդյունքների հրապարակման օրը,

8) այլ տեղեկատվություն՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող:

8. Հայտերի գիտական մակարդակի, իրագործման հնարավորությունների և պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածության գնահատման նպատակով կոմիտեն, գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի (այսուհետև՝ փորձագետների համակարգ) միջոցով, 30 օրվա ընթացքում կազմակերպում է գիտական փորձաքննություն: Գիտական փորձաքննությունն իրականացվում է գիտական փորձաքննության և գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման կարգին համապատասխան:

9. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է հայտը. գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, հետազոտական խմբի (կոլեկտիվի)

ձեռքբերումները տվյալ բնագավառում և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը թեման իրականացնելու համար, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, թեմայի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

10. Գիտական փորձաքննության արդյունքների հիման վրա կոմիտեի աշխատակազմը 10 աշխատանքային օրվա ընթացքում գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի համար ձևավորում է հայտերի ցանկ՝ փորձագետների վերջնական գնահատականների նվազման կարգով ու ներկայացնում գիտական ծրագրերի և թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողով (այսուհետև՝ հանձնաժողով):

11. Հայտերի հավասար վերջնական գնահատականների դեպքում առաջնայնությունը տրվում է այլ աղբյուրներից ֆինանսավորվող հայտին՝ ըստ համաֆինանսավորման ծավալի:

12. Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտե է ներկայացնում գիտական թեմայի ֆինանսավորման նպատակահարմարության և ծավալների մասին առաջարկություն:

13. Կոմիտեն, ելնելով տվյալ տարվան հաջորդող տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծով պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար նախատեսվող հատկացումների չափից և ներկայացված գիտական թեմաների գծով ուսումնասիրությունների կատարման նպատակահարմարությունից, հաստատում է այն գիտական թեմաների ցանկը, որոնց ծախսերի նախահաշիվները ներառվելու են կոմիտեի կողմից պատրաստվող տվյալ տարվան հաջորդող տարվա բյուջետային ֆինանսավորման հայտում:

14. Կոմիտեն հայտի հեղինակին է տրամադրում նրա հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը և գիտական և գիտատեխնիկական տվյալ բնագավառի մրցույթում հաղթած ամենացածր գնահատական ստացած հայտի վերջնական գնահատականը:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԹԵՄԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՍԱՎՈՐՈՒՄԸ

15. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հաստատումից հետո, բյուջեով պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների շրջանակներում կոմիտեն հաստատում է տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող գիտական թեմաների ցանկը, դրանց ղեկավարների

ցուցակը, կատարողների թիվը, յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող հատկացման չափը և տեղադրում է կոմիտեի կայքում:

16. Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր.

1) կոմիտեի և սույն կարգի 15-րդ կետում նշված ցանկում ընդգրկված գիտական թեմայի ղեկավարի միջև,

2) գիտական թեմայի ղեկավարի և կատարողների միջև:

17. Սույն կարգի 16-րդ կետում նշված պայմանագրերում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, նշվում են նաև համապատասխան գիտական թեմայի անվանումը, ղեկավարի անունը, ազգանունը, գիտական կազմակերպության անվանումը, որտեղ պետք է իրականացվի գիտական թեման, գիտական թեմայի իրականացման ժամկետները ու պայմանները, ֆինանսավորման չափը, ինչպես նաև հաշվետվության ձևերը, գիտական աշխատանքի հանձնման-ընդունման ակտի ներկայացման ժամկետները, արդյունքների գնահատման կարգը:

18. Գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և գիտական թեմայի ղեկավարի հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքված առանձին՝ ծառայության մատուցման պայմանագրով, որտեղ նշվում է գիտական թեմային տնտեսական ծախսերի համար հատկացված միջոցներից տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված ֆինանսավորման մասը՝ առավելագույնը՝ 8 տոկոսի չափով:

IV. ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ, ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

19. Գիտական թեմայի իրականացման մասին կազմվում են ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվություններ: Հաշվետվությունը գնահատվում է՝ հաշվի առնելով արդյունքների նորույթը և դրանց նշանակությունը, հրապարակումների կամ այլ վերջնական արդյունքների գիտական մակարդակը, դրանցում կատարողների ներգրավվածության աստիճանը: Հաշվետվությունների գնահատման կարգը սահմանում է կոմիտեն:

20. Գիտական թեմայի ընթացիկ (տարեկան) հաշվետվությունը ներկայացվում է իրականացման ժամկետի սկզբից հաշված յուրաքանչյուր 12-րդ ամսվան հաջորդող ամսվա առաջին 10-օրյակում, իսկ ամփոփիչ հաշվետվությունը՝ իրականացման ժամկետի ավարտին հաջորդող 20 օրվա ընթացքում:

21. Կոմիտեն ընդունում, հաշվառում է հաշվետվությունները և փորձագետների համակարգի միջոցով 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում դրանց գիտական փորձաքննությունը: Գիտական փորձաքննության վերջնաժամկետը լրանալուց

հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեի աշխատակազմը գիտական փորձաքննության արդյունքները ներկայացնում է հանձնաժողով: Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է հաշվետվությունները և կոմիտե է ներկայացնում գիտական թեմայի հետագա ֆինանսավորման նպատակահարմարության (ընթացիկ հաշվետվություն) կամ ընդունման (ամփոփիչ հաշվետվություն) մասին առաջարկություն:

22. Հանձնաժողովի առաջարկության հիման վրա կոմիտեն որոշում է ընդունում գիտական թեմայի հետագա ֆինանսավորման կամ դրա դադարեցման մասին: Գիտական թեմայի ֆինանսավորումը դադարեցվում է հաշվետու ժամանակահատվածին հաջորդող երրորդ ամսից:

23. Ավարտված աշխատանքի վերջնական արդյունքները վերլուծելու, դրանց ներդրումը և կիրառումը երաշխավորելու հնարավորությունները պարզելու նպատակով կոմիտեն կազմակերպում է ամփոփիչ հաշվետվության գիտական փորձաքննություն: Գիտական թեմայի իրականացման վերջին տարվա ֆինանսավորման ծավալի 10 տոկոսը հատկացվում է ամփոփիչ հաշվետվության գիտական փորձաքննության դրական եզրակացության և գիտական աշխատանքի հանձնման-ընդունման ակտի ստորագրման դեպքում՝ գիտական թեմայի ավարտին հաջորդող եռամսյա ժամկետում:

24. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ գիտական թեմայի ընթացիկ (տարեկան) կամ ամփոփիչ հաշվետվությունների գիտական փորձաքննության և հանձնաժողովի բացասական եզրակացությունների հիման վրա դադարեցված կամ ավարտվող գիտական թեմայի չֆինանսավորված միջոցները մրցութային կարգով գիտական սարքավորումներ գնելու նպատակով վերաբաշխելու վերաբերյալ:

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2010 թվականի
« » ---------- N որոշման

ԿԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ – ԾՐԱԳՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ծրագրերի (այսուհետև՝ նպատակային ծրագրեր) ֆինանսավորման կարգը:

2. Նպատակային ծրագրերը համապետական նշանակության ռազմավարական ծրագրերի շրջանակներում իրականացվող, գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների շրջանակներում համալիր ծրագրեր են, որոնք նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և գիտամշակութային հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը, հասարակության կենսական պահանջների բավարարմանը, համաշխարհային շուկա մրցունակ արտադրանքի արտահանմանը:

3. Նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար հատկացումները նախատեսվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում:

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն նպատակային նախագծերի ընտրության և հաստատման նպատակով կազմակերպում է մրցույթ՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

5. Համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակային ծրագրերի պատվիրատու պետական մարմին հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ պատվիրատու):

II. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և գիտությունների ազգային ակադեմիան, բյուջետային տարվա սկզբից առնվազն երեք ամիս

առաջ, պատվիտուլին են ներկայացնում հայտ՝ իրենց կողմից կարգավորվող ոլորտների հիմնախնդիրները նպատակային-ծրագրային ֆինանսավորման շրջանակներում լուծելու համար:

7. Հիմնախնդիրների ընտրության նպատակով պատվիրատուն ձևավորում է նպատակային ծրագրերի հայտերի ընտրության հանձնաժողով, որի անհատական կազմը հաստատվում է պատվիրատուի կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչներից:

8. Միևնույն պետական կառավարման մարմնից և գիտությունների ազգային ակադեմիայից մի քանի հայտերի ներկայացման դեմքում անհրաժեշտ է դրանք շարադրել ըստ առաջնայնության:

9. Հանձնաժողովի դրական կարծիք ստացած հայտերի (այսուհետ՝ ծրագիր) հիման վրա կոմիտեն սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի ցանկը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ընդգրկելու նպատակով:

10. Հայտը պետք է պարունակի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նպատակային ծրագրերի նախագծերը ընդգրկելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումից բխող ընդհանուր տեղեկություններ առաջարկվող հիմնախնդրի վերաբերյալ՝ արդիականության, նպատակների, իրականացման ժամկետների, ֆինանսավորման ծավալների, ակնկալվող արդյունքների, ինչպես նաև առևտրայնացման հեռանկարի մասին՝ կիրառական խնդիրների համար, ավարտական ձևերի (գիտական հրապարակումներ, փորձնական նմուշներ, արտոնագրեր, ներդրման վկայագրեր, հաշվետվություններ և այլն) մասին:

11. Նպատակային ծրագրերի ֆինանսավորման գործընթացի հետ կապված հետագա հարաբերությունները կարգավորվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2010 թվականի
---------- « » -ի N որոշման

ԿԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետև՝ բուհ) հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, համաֆինանսավորման սկզբունքով և այլ աղբյուրներից ֆինանսավորվող գիտական ծրագրերի (այսուհետև՝ գիտական ծրագիր), պայմանագրային (թեմատիկ) թեմաների (այսուհետև՝ գիտական թեմա), նախագծերի հայտերի ու իրականացվող գիտական ծրագրերի և թեմաների ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվությունների (այսուհետև՝ հաշվետվություն) գիտական փորձաքննության և փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի (այսուհետև՝ փորձագետների համակարգ) ձևավորման կարգը:

2. Գիտական ծրագրերի և թեմաների հայտերի (այսուհետև՝ հայտ) գիտական մակարդակի, իրականացման հնարավորությունների, ֆինանսավորման նպատակահարմարության և ծավալների հիմնավորվածության մասին անհրաժեշտ առաջարկություններ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետև՝ կոմիտե) կազմակերպում է հայտերի գիտական փորձաքննություն:

3. Գիտական ծրագրերի և թեմաների իրականացման առանձին փուլերի կամ ամբողջական արդյունքների գնահատման և առաջադրանքներին դրանց համապատասխանությունը, ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը պարզելու նպատակով կոմիտեն կազմակերպում է հաշվետվությունների գիտական փորձաքննություն:

4. Գիտական փորձաքննության հետ կապված ծախսերն իրականացվում են կոմիտեի կողմից՝ տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

5. Գիտական փորձաքննությունն իրականացնելու նպատակով կոմիտեն ձևավորվում է փորձագետների համակարգ:

II. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Փորձագետների համակարգը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա առաջատար գիտնականներից ու գիտական աշխատողներից (այսուհետև՝ փորձագետ)՝ գիտական կազմակերպությունների և բուհերի ներկայացմամբ, ինչպես նաև անհատական առաջադրումով:

7. Փորձագետների համակարգը ձևավորվում է ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների, հաստատվում կոմիտեի նախագահի կողմից՝ երեք տարի ժամկետով:

8. Փորձագետին ներկայացվող հիմնական պահանջներն են. գիտական աստիճանի առկայություն, գիտահետազոտական և (կամ) գիտամանկավարժական գործունեության աշխատանքային ստաժ, վերջին 5 տարիների ընթացքում գրախոսվող գիտական ամսագրերում աշխատությունների և արտոնագրերի առկայություն: Ներկայացվող պահանջների թվային (ցուցանիշային) տվյալները հաստատում է կոմիտեն՝ հաշվի առնելով գիտական բնագավառների առանձնահատկությունները:

9. Փորձագետն իրավունք ունի.

1) մասնակցելու կոմիտեի կողմից անցկացվող մրցույթներին՝ որպես գիտական ծրագրի և (կամ) թեմայի հայտի հեղինակ կամ կատարող՝ չմասնակցելով այդ հայտի փորձաքննությանը,

2) հրաժարվել փորձաքննությունից, եթե փորձաքննվող նյութի բովանդակությունը չի համընկնում իր գիտական հետաքրքրություններին:

10. Փորձագետը պարտավոր է.

1) գիտական փորձաքննության ժամանակ պահպանել անաչառություն,

2) գիտական փորձաքննության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության և իր կողմից տրված եզրակացության մասին պահպանել գաղտնիություն,

3) փորձաքննության անաչառության վրա ազդող ոչ գիտական բնույթի գործոնների առկայության դեպքում (հայտի հեղինակի հետ համահեղինակային, կոնֆլիկտային, բարեկամական կամ ֆինանսական փոխհարաբերություններ, գիտական կամ վարչական ղեկավարում և այլն)՝ տեղեկատվություն ներկայացնել կոմիտե և հրաժարվել փորձաքննություն իրականացնելուց:

11. Փորձագետի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել կոմիտեի կողմից.

1) իր դիմումի համաձայն,

2) պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում,

3) գիտական գործունեության ընթացիկ (տարեկան) վերլուծության տվյալներով, սույն կարգի 8-րդ կետով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

12. Փորձագետների համակարգի կազմն անհրաժեշտության դեպքում լրացվում է կոմիտեի կողմից՝ սույն կարգի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերի համաձայն:

13. Կոմիտեին իրավունք է վերապահվում, մասնագիտական կարծիք ստանալու նպատակով, դիմել փորձագետների համակարգում չընդգրկված համապատասխան մասնագետների:

III. ՀԱՅՏԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

14. Հայտը կամ հաշվետվությունը գիտական փորձաքննության ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեն համակարգչային ծրագրի միջոցով՝ պատահական ընտրությամբ որոշում է փորձագետներին և նրանց տրամադրում հայտը կամ հաշվետվությունը:

15. Հայտը կամ հաշվետվությունը փորձագետը ստանում է անձամբ կամ էլեկտրոնային փոստով:

16. Հայտը կամ հաշվետվությունը էլեկտրոնային փոստով ստանալուց հետո, նույն օրը փորձագետը այդ մասին տեղեկացնում է կոմիտեին:

17. Հայտը կամ հաշվետվությունը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում փորձագետը իրականացնում է հայտի գիտական փորձաքննություն:

18. Յուրաքանչյուր հայտ փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետի կողմից: Յուրաքանչյուր հայտի համար փորձագետը լրացնում է կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման հարցաթերթիկը: Գնահատման հարցաթերթիկը ընդգրկում է հարցեր հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթի և արդիականության, իրականացման նախադրյալների, փուլերի և ժամկետների, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածության ու գիտության տվյալ բնագավառի և մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

19. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

20. Փորձագետների գնահատականները տրամագծորեն տարբերվելու դեպքում հայտը տրվում է գիտական փորձաքննության՝ երրորդ փորձագետին: Այդ դեպքում վերջնական գնահատականը երեք փորձագետների գնահատականներից երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է:

21. Հայտերի գիտական փորձաքննության վերջնաժամկետը լրանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեն գիտական և գիտատեխնիկական

գործունեության յուրաքանչյուր բնագավառի համար ձևավորում է հայտերի ցանկ՝ փորձագետների վերջնական գնահատականների նվազման կարգով ու ներկայացնում գիտական ծրագրերի և թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողով (այսուհետև՝ հանձնաժողով):

22. Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտե է ներկայացնում հայտերի ֆինանսավորման նպատակահարմարության և ծավալների մասին առաջարկություն:

23. Հանձնաժողովի առաջարկության հիման վրա կոմիտեի նախագահը հաստատում է ֆինանսավորման ենթակա գիտական ծրագրերի և թեմաների ցանկը:

24. Ֆինանսավորման ենթակա գիտական ծրագրերի և թեմաների ցանկը հաստատելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտերի հեղինակներին կոմիտեն տրամադրում է գիտական փորձաքննության վերջնական գնահատականը և տվյալ բնագավառի մրցույթում հաղթած ամենացածր գնահատական ստացած հայտի վերջնական գնահատականը:

25. Յուրաքանչյուր հաշվետվություն փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետի կողմից: Յուրաքանչյուր հաշվետվության համար փորձագետը լրացնում է կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման հարցաթերթիկը: Գնահատման հարցաթերթիկը ընդգրկում է հարցեր գիտական ծրագրի կամ թեմայի շրջանակներում ձեռք բերված արդյունքների և հայտով նախատեսված նպատակներին համապատասխանության, արդյունքների որակի, գիտական և գիտատեխնիկական նորույթի և արդիականության, ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության ու գիտության տվյալ բնագավառի և մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

26. Հաշվետվությունների գիտական փորձաքննության վերջնաժամկետը լրանալուց հետո, 10 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեն ամփոփում է արդյունքները և տրամադրում հանձնաժողովին:

27. Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտե է ներկայացնում իրականացվող գիտական ծրագրի և թեմայի հետագա ֆինանսավորման նպատակահարմարության կամ ավարտված գիտական ծրագրի և թեմայի արդյունքների գիտական մակարդակի վերաբերյալ առաջարկություն:

28. Իրականացվող գիտական ծրագրի և թեմայի ֆինանսավորումը շարունակվում է ընթացիկ (տարեկան) հաշվետվության գիտական փորձաքննության դրական եզրակացության և հանձնաժողովի առաջարկության հիման վրա:

29. Իրականացվող գիտական ծրագրի և թեմայի ֆինանսավորումը դադարեցվում է գիտական փորձաքննության բացասական եզրակացության և հանձնաժողովի առաջարկության հիման վրա:

30. Հաշվետվությունների գիտական փորձաքննության գործընթացի ավարտից հետո, դրա արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն է տրվում գիտական ծրագրերի և թեմաների ղեկավարներին:

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2010 թվականի
---------- « » -ի N որոշման

ԿԱՐԳ

ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, համաֆինանսավորման սկզբունքով և այլ աղբյուրներից ֆինանսավորվող գիտական ծրագրերի (այսուհետև՝ գիտական ծրագիր), պայմանագրային (թեմատիկ) թեմաների (այսուհետև՝ գիտական թեմա), նախագծերի հայտերի երաշխավորման ու իրականացվող գիտական ծրագրերի և թեմաների ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվությունների (այսուհետև՝ հաշվետվություն) ընդունման հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգը:

2. Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետև՝ կոմիտե) նախագահին կից խորհրդատվական մարմին է, որի գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական ծրագրերի և թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման մասին առաջարկություն ներկայացնելն է:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Հանձնաժողովը ձևավորվում է կոմիտեի նախագահի կողմից՝ 3 տարի ժամկետով:

4. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է կոմիտեի նախագահի հրամանով:

5. Հանձնաժողովը կազմված է նախագահից, քարտուղարից և անդամներից:

6. Հանձնաժողովը, ի պաշտոնե, ղեկավարում է կոմիտեի նախագահը: Հանձնաժողովի անդամները համապատասխան նախարարությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև գիտության ոլորտում լայն ճանաչում և կառավարման փորձ ունեցող գիտնականներ են:

7.Հանձնաժողովի անդամի լիազորությունը դադարում է.

1) կոմիտեի նախագահին ուղղված գրավոր դիմումի համաձայն,

2) լիազորությունների ժամկետը ավարտվելու դեպքում,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,

4) եթե նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում,

5) նրա մահվան դեպքում:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8.Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի նախագահի կամ անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

9.Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ, նրա հանձնարարությամբ, հանձնաժողովի անդամներից որևէ մեկը: Հանձնաժողովի նիստի օրակարգն ու անհրաժեշտ նյութերը հանձնաժողովի անդամներին են տրամադրվում նիստը գումարվելուց 3 օր առաջ:

10. Հանձնաժողովի նիստն իրավազոր է հանձնաժողովի անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում:

11. Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող նյութերի հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշում: Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին կազմվում է արձանագրություն:

12. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

13. Հանձնաժողովի քարտուղարը կազմում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը, որը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները:

14. Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած հանձնաժողովի անդամի հատուկ գրավոր կարծիքը կցվում է արձանագրությանը:

15. Քվեարկության հավասար ձայների դեպքում՝ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

16. Արձանագրությունը հանձնաժողովի անդամներին է տրամադրվում նիստից հետո, մեկ շաբաթվա ընթացքում:

17. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները,

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը,

3) ստորագրում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը,

4) անհրաժեշտության դեպքում կազմավորում է մասնագիտացված հանձնախումբ,

5) մասնագիտական կարծիք ստանալու նպատակով դիմում է հանձնաժողովի կազմում չընդգրկված համապատասխան գիտնականների և մասնագետների,

6) իրականացնում է սույն կարգից բխող այլ լիազորություններ:

18. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին,

2) ներկայացնում է առաջարկություններ հանձնաժողովի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

3) նիստի քննարկումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվության մասին պահպանում է գաղտնիություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N N 1121, 1122 ԵՎ 1123 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ), ՆՊԱՏԱԿԱՅԻՆ – ԾՐԱԳՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N N 1121, 1122 և 1123 որոշումները ուժը կորցրած ճանաչելու, գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ֆինանսավորման, գիտական փորձաքննության և գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման, գիտական ծրագրերի և թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման նպատակը ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձևերի կատարելագործումն է, որը կնպաստի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Անհրաժեշտ է հստակեցնել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձևերը, դրանց հատկացման չափանիշները և մեխանիզմները՝ ապահովելով համապատասխան չափորոշիչներով միջոցների հասցեագրված հատկացումը ու դրանց օգտագործման պատասխանատվության բարձրացումը: Բացի այդ, հնարավորություն կստեղծվի արդյունավետ վերահսկողություն իրականացնել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանը հատկացված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ:

Գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման կարևորագույն պայման է հանդիսանում գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ստեղծումը և ներդրումը, ինչպես նաև գիտական ծրագրերի (թեմաների) հայտերի և իրականացվող ծրագրերի (թեմաների) հաշվետվությունների գնահատման միջազգային չափանիշներին համապատասխան փորձաքննության կարգի կիրառումը:

Գիտական ծրագրերի (թեմաների) հայտերի, հաշվետվությունների ներկայումս գործող փորձաքննության կարգի պայմաններում գիտության ոլորտի ֆինանսական հատկացումները

փոշիացվում են և ամբողջությամբ չեն ծառայում գիտության զարգացման խնդրին՝ անգամ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման բազմաձևության (բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային) առկայության պայմաններում: Մասնավորապես, պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական աշխատանքները հաճախ կրկնում են բազային ֆինանսավորմամբ նախատեսված հետազոտությունները, իսկ նպատակային-ծրագրային ծրագրերը նպատակաուղղված չեն հասցեագրված գիտահետազոտական արդյունքների ձեռքբերմանը:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ) և նպատակային-ծրագրային ֆինանսավորման նոր կարգերի ընդունումը թույլ կտա ներդնել գիտական ծրագրերի և թեմաների ֆինանսավորման այնպիսի մեխանիզմներ, որով կբացառվի պետության կողմից հատկացվող միջոցների փոշիացումը: Պահպանելով ֆինանսավորման բազմաձևությունը, ֆինանսավորումը պետք է իրականացվի բացառապես մրցութային կարգով, ծրագրային հիմնավորման սկզբունքով և հասցեագրված:

- Բազային ֆինանսավորումը պետք է իրականացվի գիտակազմակերպչական և հիմնարար, կարևորագույն կիրառական հետազոտական ծրագրեր իրականացնող գիտական կազմակերպությունների (գիտական ինստիտուտներ, կենտրոններ) և գիտակրթական ենթակառուցվածքների (լաբորատորիաներ, այդ թվում նաև բուհերի) պահպանման և զարգացման նպատակով, ինչպես նաև առանձին եզակի և կոլեկտիվ օգտագործման բնույթ ունեցող սարքավորումների ձեռքբերման համար, մրցութային կարգով՝ ըստ ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների:
- Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը պետք է վերածվի իրական դրամաշնորհային համակարգի: Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը կոչված է ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների շրջանակներում ապահովելու առանձին հետաքրքրություն ներկայացնող, արդիական խնդիրների լուծումը, որոնք կարող են հանգեցնել նոր գիտական հետազոտությունների կամ գիտատեխնիկական մշակումների:
- Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորումը պետք է իրականացվի համապետական նշանակության ռազմավարական ծրագրերի շրջանակներում, գիտական և գիտատեխնիկական հիմնավորմամբ հետազոտական ծրագրերի ձևով: Նպատակային-ծրագրային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը պետք է առավելապես կիրառական բնույթի լինեն, առաջադրվեն համապատասխան գերատեսչությունների կողմից և նպատակաուղղված լինեն պետության կողմից առաջադրված խնդիրների լուծմանը:

ՀՀ գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության, իրականացվող գիտական և գիտատեխնիկական աշխատանքների ու հետազոտությունների մակարդակի

բարձրացման և միջազգայինի հետ համապատասխանեցման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ստեղծումը և ներդրումը, ինչպես նաև միջազգային մակարդակին համապատասխան գիտական փորձաքննության չափանիշների ու չափորոշիչների սահմանումը և կիրառումը: Այդպիսի համակարգի ներդրումը հնարավորություն կտա գիտական ծրագրերի (թեմաների) ընտրությունը իրականացնել բացառապես մրցութային կարգով, ֆինանսավորել և իրագործել այն գիտական ծրագրերը և թեմաները, որոնք միտված են միջազգային մակարդակին համապատասխան արդյունքների ձեռքբերմանը: Այդպիսի համակարգի ներդրմանն են ուղղված գիտական փորձաքննության և գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման, գիտական ծրագրերի և թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգերը: